Հուսիկ Արա

Հեղափոխություն

Տվածդ մի կյանք է, երկիր,
ու երկու հեղափոխություն.
օրերս կում-կում բարակեցին
այդ երկճյուղ թավշյա կոկորդում:
Մանրաթելեր մնացին ինձ
ու սարդի մի ձիգ լար,
և կախ-կախվել եմ հող ու ամպի արանքում:

Տարվում էր մարմինս տերև՝ալիքը ալիքի վրա
ու բերվում տաշեղ՝հոսանքը հոսանքից հետո.
փողոցեփողոց, հրապարակ ու կայարան:
Հետո գույները էլ տաք չէին՝խամր ու մրոտված,
բառերի փոշին էր թափվում,
ծածկում էր սավանը սպիտակ խոսքի,
և հյուսվում էր պարան ու էլի պարան:

Մի պատերազմից մյուսը անցնող
անկանոն կրակահերթ.
ժամանակավոր դադար է կյանքս
ապրել-չապրելու սևխոռոչ երախում: